

## ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԻ ՆՄՈՒԾ

Հայկական ձեռագրերի պահպանման արկեստի մի կարևոր մասն է կազմում նրանց մետաղյա երեսապատումը, որը մեր ազգային ոսկերչական արվեստի մեջ ունի իր ուրովին տեղը:

Մատենադարանի բազմաթիվ ձեռագրակազմերի մեջ աշքառու տեղ են գրափում այն մետաղակազմ ձեռագրերը, որոնք մեզ հասել են վասպուրականից (Վան, Լիմ, Արծկե և Աղթամար): Նրանք կազմում են մի առանձին դպրոց, որն իր բազմազան կողմերով և գրվագման ինքնատիպությամբ տարբերվում է ուրիշ խմբավորումներից:

Այս դպրոցից մեզ հասած գործերը ժշ—ժլ դարերի գործեր են:

ԺՇ—ժլ դարի վանի արծաթագործությունից մեզ գրեթե ոչինչ չի հասել, և այս շատ հասկանալի է: Ոսկերչական արվեստի գործերը ամենահեշտ տեղափոխվող և վաճառվող արժեքներն են ու պատմությունից գիտենք, որ արշավող բանակները առաջին հերթին կողոպտել են այն, ինչ որ թանկարժեք մետաղներից է պատրաստված:

Ժլ և ժշ դարերից մեզ հասած ձեռագրերի կաշվե կազմերից շատերի վրա հանդիպում ենք անցրերի և ճեղքերի, որոնք վատահարար կողոպտաների հետքերն են: Այս ձևով շատ մետաղյա կազմեր անջատվել են ձեռագրերից ու տարբել, իսկ մեզ հասել են ձեռագրերը, հաճախ թիշ վնասված վիճակում:

Ձեռագրերի վասպուրականի մետաղյա կազմերի արվեստի ուսումնասիրությունը մեզ առաջնորդեց Մատենադարանից, ուր գտնվում է Նրանց ստվար մեծամասնությունը, գեղի Մայր Աթոռ. Ս. Էջմիածին, որտեղ կամ մի ձեռագիր Ավետարան, գրված 1484 թվականին Վանի Ս. Աստվածածին եկեղեցում, ոսկյա պահպանակով և կազմով:

Ձեռագրի գրիչն է Աղարիա երեց, ժաղկողը՝ Կիրակոս, պատվիրատուն՝ խոչա Քարիմշե, վերջին կազմողը՝ Զիրաք, որը հավանաբար գրվագողն է, քանի որ կազմող են համարվում նաև այն անձերը, որոնք ոչ միայն կաշվով են կազմում, այլև ուրիշ նյութերով (արծաթ, ոսկի, պղինձ, արույր, փղոսկր և այլն): Մանավանդ որ վերջին կազմը երեսի մետաղապատումն է, այսինքն ոսկերչի (Զիրաք) գործը: Կազմը նորոգել է Տեր Մահակը:

Այս ձեռագրի կազմը, որի շափերն են 18,8×13,5×8,5 մմ., գործածությունից մաշվել է: Նույն վիճակում են և ներսի թղթերը: Ավետարանի այս կազմը ոսկուց է պատրաստված և մեզ հասած միշնադարյան արվեստի գործերի մեջ հազվագյուտ նմուշներից է և ներկայացնում է նաև գեղարվեստական արժեքը: Վասպուրականի ձեռագրակազմերի ստվար մեծամասնությունը արծաթով են պատած, իսկ մի փոքր մասն էլ արույրով կամ պղնձախառն արծաթով:

Վերոհիշյալ ձեռագրի բուն կազմը կաշեպատ տախտակ է, որի վրա հետագային անցկացված են ոսկյա դրվագլած թերթիկները:

Կազմը ունի 2 կողեր, կաշեպատ տախտակ, կաշեպատ կոնակով և դոնակով: Այս բոլորը երեսպատված են ոսկու և արծաթի դրվագումներով՝ հետեւյալ դասավորմամբ. Ա. և Բ կողերը՝ ոսկի, 0,4 մմ. հաստությամբ թերթերի վրա, կոնակը արծաթ, երեսից ոսկեցրած, 0,6 մմ. հաստությամբ թերթի վրա, դոնակը ոսկի, 0,4 մմ. հաստությամբ ոսկու թերթի վրա, իսկ ներքեցից, այն կաշվի վրա պահելու համար, ոսկու և կաշվի արանքում կամ արծաթ թերթ, 0,4 մմ. հաստությամբ:

Ա կողի (նկար 1) մակերեսը լրիվ դրվագված է: Կենտրոնում կա Աստվածածին և մասնեւկ Հիսուսի պատկերագանդակը, ցայտուն



Նկար 1.—Վանի Ս. Աստվածածին Եկեղեցու 1484 թվականի ձեռագիր Ավետարանի դրվագված  
լիազմի առաջին կողը

կը բարով դրվագված, որն իր ռելիքֆով իշխում շրջանակ, լուսամուտի նման։ Այս պատկե-  
է շուրջի կերպարներին և ունի կամարակապ բարանդակի վերևում կա սրածն ծայրերով մի-

իսաւ, որն ընդհանուր ֆոնի հետ հնչում է շատ ներդաշնակ և նրանից հազիվ անշատվում է մի շրջագծով: Կամարի երկու կողմերում կան քանդակված երկու հրեշտակներ և նրանցից փոքր ինչ ներքեւ երկու սրբանկարներ, որոնց ինքնությունը չի բացահայտվում, որովհետև տեղում արձանագրություն չկա:

Վերոհիշյալ շորս կերպարները դրվագված են միայն շրջագծերում և 2 վերջինների գլխի լրաւապահների շուրջ: Մնացած մանրամասնությունները (գեմք, հագուստի ծալքեր և այլն) փորագրված են գրչով: Բացի գեմքերի մանրամասնություններից և հագուստների ծալքերից, որոնք կատարված են ճշտությամբ, հագուստների վրա կան ուղղահայց զարդեր, որոնք բխում են ոսկերչական զուգաթիւ պարանից և երեքթելյա գործվածքից և հարմարեցված են փորագրական արվեստի հնարավորություններին, այն ենթարկելով գծանկարի օրենքներին: Վերևի երկու հրեշտակների գեմքերը ներքեմ երկու մարդկային կերպարների գեմքերի նման փորագրված են, միայն նրանց թևերի զարդանկարները զուգահեռ գծերով են և շատ կապվում են, իրենց ոճով, կոնակի արծաթ դրվագման տերևների հետ: Մնացած տարածությունը ծածկը ված է խաղողի տերևներից բաղկացած ֆոն կազմող ազատ զարդանկարներով: Դրվագումը ավարտելուց հետո, շրջապարդի ներսի և դրսի եզերքները առնվել են մեկ և երկու զուգաթիւ պարանների մեջ:

Կան 60 ակներ, որոնցից 25-ը կարմիր, 14-ը կանաչ, 10-ը սպիտակ և 9-ը կապույտ են (մնացած 2-ը պակասում են), ամրացված կլոր, քառակուսի և վեցանկյուն շրջանակների մեջ: Կարծում ենք, որ սրանց նպատակը ոչ միայն զարդարելն է, այլև պաշտպանել դրվագված մակերեսը, որովհետև այն կատարված է շատ բարակ ոսկի թերթի վրա, որն օգտագործման ժամանակ ենթակա է հաճախակի հարվածների և հապալների: Ակների և նրանց շրջանակների բարձրությունն է 6 մմ., որոնք կատարում են կիսագնդիկների գեր և որոնց հաճախ հանդիպում ենք վասպուրակների և ընդհանրապես Հայաստանի շատ կողմերից մեզ հասած ձեռագրակաղմերի վրա: Ակների կատարած այս դերը պապուցիւմ է ակներից շատերի երեսների

մաշված վիճակից և մի քանիսի փշովածությունից:

Ակները թանկարժեք և իսկական չեն (իսկական ակները դժվար են փշոված), և ոչ է շատ հին, քանի որ այս տիպի արվեստական ակներ հեռավոր անցյալում չէին պատրաստվում, Վասպուրական ներմուծված են առեւտրական ճանապարհներով: Զեռագրակաղմերի ակները, որոնք տեղում են պատրաստված, հղկված երեսներ չունեն, այլ ձուլված զանգվածներ են, հաճախ գունավոր պատկի:



Նկար 3.—Ավետարանի արծաթայ կազմի երկրորդ կողը գրված է. «Տիս լշկէ խչա Միջդին Յվնս թմին բկիսլը բրուն», որը վերծանվում է. «Տուփս լիշտակ է խոչայ Միջդին, Յովհաննէսին, Թամին, բեկիս լր որուն»:

Հավանաբար ֆոնը կազմող դրվագումը և արձանագրությունը կատարվելուց բավական հետո, այն պահպանելու համար ավելացրել են ակների շրջանակները, մանավանդ որ շուրջի պարանների մեջտեղի եզրագարդը սերտորեն կապվում է ներսի ֆոնի հետ և շարունակությունն է ֆոնի զարդին և առանձին զարդանկար չի կազմում:

Առաջին կողի պատկերաբանդակների մեջ լավագույն դրվագվածը, իր ոելլեֆով, հաս-

## ՏԻՍ ԼՇԿԷ ԽՉԱ ՄԻՋԴԻՆ ՅՎՆՍ ԹՄԻՆ ՅՈՎՀԱ ԲՐՄԵՆ ԲԿԻՍԼ ԲՐՈՒՆ

Նկար 2.—Ավետարանի կազմի առաջին կողի վերևի ներքեմի արձանագրությունը

կանալիությամբ և զգացման հաղորդակից դարձնելու ունակությամբ, կենտրոնի Աստվածածնի և մանուկ Հիսուսի քանդակն է, դրվագված մեծ վարպետությամբ և ճարտարությամբ։ Մնացած չորս կերպարները ավելի զարդ-կերպարներ են, քան պատկերաքանդակներ և լավ են միաձուլվում ֆոնի ծաղկազարդման հետ։

Երկրորդ կողմ (նկար 3) իր ընդհանուր դասավորական գրեթե հար և նման է առաջինին, որտեղ զարդ-կերպարներին փոխարինում է ամբողջովով օրնամենտալ լուծումը։ Դրվագման ոճը հար և նման է առաջինին, սակայն ֆոնի գծանկարը տարրերվում է նախորդից այնքանով, որ այստեղ զարդանկարները դարձարձիկ են և ենթակա ավելի խիստ գծագրական օրենքների, նախորդի փոխարքեն, որի զարդանկարային ֆոնը ավելի ազատ գծանկարով է։ Մոտավորապես նույնաման զարդանկարների հաճախ ենք հանդիպում հայկական մանրանկարչության, ճարտարապետության և կերպարվեստի այլ բնագավառներում, սակայն այստեղ գծային մշակումը շատ հարմար է մետաղային արվիստներից պահանջվող լարայնությանը, և մանրանկարային արվեստի մեխանիկական կրկնությունը շի կազմում։ Այստեղ էլ վարպետը շի ենթարկվել խիստ կանոնների և հնարավոր շափով, առանց խախտելու զարդանկարի ձգտումը գեպի կանոնավորությունը, աշխատել է ազատ, պահելով ոսկերչական ձևերի մի այնպիսի ճկունությունը, որն ուրիշ նյութի վրա դժվար թե ստացվեր։ Շուրջի զարդանկարը շատ նման է առաջին կողմին և նրա նման երիկված է զուգաթել պարաներով։ Այս երկու կողմերի դրվագման ֆոնը կետեր առաջացնող հարվածների լուծումով է և ստացված է դրվագիշի ծայրի տափակ մակերեսի վրա գտնված շախմատանման գծիկներից, որոնք հարվածելով ստացվում են նույնաձև կետեր՝ շրջված վիճակով, դրանք դրոշմելով հարվածը ընդունող մետաղի վրա Շրջագարդի վրա և ներսի 4 անկյուններում կան 36 ակներ, որոնցից 13-ը կարմիր, 13-ը կանալ և 3-ը սպիտակ։ 7-ը ակներ պակասում են։

Շրջագարդի վերեկ և ներքեկ շարքերի վրա, ակներին մեջընդմեջ կա հետևյալ արձանագրությունը (նկար 4). «Ե[ս] ո [չ]ա Մ[ա]լ-

Ի Հ Յ Ո Ա Մ Ր Ո Գ Յ Ո Մ

Ի Հ Յ Ո Գ Ր Ո Գ Ր Ո Կ Յ


Նկար 4.—Ավետարանի կազմի երկրորդ կողմի վերևի և ներքևի արձանագրությունը

գիսն, ի[ս] ո [չ]ա Գ[ր]ի լ[ո]գ[ ո ]լ[ո]ն»։ Իսկ ինչ վերաբերում է կենտրոնի Աստվածածնի և մանուկ Հիսուսի պատկերաքանդակին, այն շատ նման է առաջին կողմի կենտրոնի նույն կերպարներին, աննշան տարրերությամբ, այսինքն Աստվածածնի աջ ձեռքի փոքրությամբ և ֆոնի մշակման մանրությամբ։ Արդյո՞ք այս երկու պատկերաքանդակները մի ընդհանուր կնքոցով (գրոշմահայր, poingçon) խփված չեն, որովհետև այնքան նման են նրանք իրար և նույն չափի են, նույնիսկ շրջագծերում։

Վերոհիշյալ երկու պատկերաքանդակներից ամեն մեկի դեմքերի և հագուստների մանրամասնությունները մշակված են դրվագումով։ ի տարրերություն առաջին կողմի շուրջի զարդ կերպարներին, որոնց մանրությունը մշակված են փորագրությամբ, իսկ նրանց կամարակապ շրջանակների ներսի ֆոնը՝ թեթև ձաճանշազարդ դրվագմամբ։ Այս երկու կողմերի զարդանկարները, դրվագումից հետո, մշակված են տափակ և փալլոն կոնակ ունեցող գրիներով, և այս էլ հավանաբար ուրոգումից անմիջապես հետո, մի քի վնասիլով դրվագման որակին, ստեղծելով ոճի ընտրականություն (électisme)։ Երկրորդ կողմի ձախ-կողմում, վերևում և ներքևում, կան 2 փականների ճիմքերը, իսկ առաջինի աջ կողմում, նույն դասավորությամբ, կան նույն փականների հենակետերը, ուր անցյալում անցկացրել են փականների ծայրերը։ Այժմ այդ փականների շարժական մասերից, այսինքն այն ժամանակն մասերից, որոնք հավանաբար ոսկի շղթայից կամ մետաքս ժապավեններից են եղել, մնում է միայն երկրորդ կողմի ցածի հիմքի մեծ օղակը։

Ամենագեղցիկ և ամենակատարյալ ունամենատալ լուծում ունեցող մասը կազմի կոնակն է (նկար 5), որը արծաթից է։ Այստեղ վստահաբար նա փոխարինում է անցյալի կոնակը և թերևս նոր վարպետը աշխատել է նմանեցնել անցյալի կորած կամ օգտագործումից մաշված կոնակին։

Ներկա վիճակում նա 0,6 միլիմետր հաստությամբ, երկու զուգահեռ, ուղղահայց թերթերից է կազմված, որոնց վրա դրվագված են հայկական մանրանկարչության յուրահատուկ հեղող ամենագեղցիկ բուսական ոճավորված զարդանկարներ, որոնք հատուկ են Ժէ դարու հայկական արծաթագործության։ Այս երկու զուգահեռ թերթերի վրայի գրվագումը նախորդ երկու կողմերի դրվագումից տարրերվում է իր կատարման ճշտությամբ և գծերի հստակությամբ։ Տերևների շրջագծերից ներսի մասի մշակումը, երկու կողմերի տերևների նման, զուգահեռ գծիկներով է կատարված։ Պարզ է, որ այս կազմի կոնակը դրվագով վարպետը ձգտել է մի ընդհանրու-




Նկար 5.—Ավետարանի կազմի կռնակը

թյուն մտցնել կողերի և կռնակի ոճերի միջև  
և տերևների շրջագծերը մշակելիս, օգտագոր-  
ծել է տափակ կռնակով գրիչ, այն մի քիչ  
թեքելով։ Դրվագով կատարված է շատ քիչ  
խորովյամբ և հավանաբար մեկ պրոցեսով։  
Այս երկու գրվագված թերթերի ձախ և աջ  
կողմերի վերևում և ներքեւում կան զուգաթել  
պարաններ, հետևյալ դասավորությամբ։  
Վերևում և ներքեւում 2 զուգաթել, դրսի ձախ և  
աջ կողմերում 2 զուգաթել, իսկ 2 թերթերի  
ներսի հանդիպակաց կողմերում 1-ական  
զուգաթել պարան, որպես եզրափակիչ զարդ։  
Երկու ուղղահայաց դրվագված թերթերի մեջ-  
աղի շերտի կռնակի երկու կողմերի վրա,  
այնտեղ, ուր նրանք հանդիպում են երկու  
կողերին, ուղղահայաց, թերթերին զուգահեռ,  
շարված է այն դասական շղթաներից, որոնց  
նմաններին հաճախ կարելի է հանդիպել  
Վասպորականի արծաթյա կազմերի վրա  
(օրինակ՝ Սատենադարանի № № 5637, 6776  
և այլ ձեռագրակազմերի կռնակների վրա)։  
Նրանք բաղկացած են մանր գնդիկներից, ո-

րոնց ամեն մեկի երկու ծայրերին մածուցված  
են կլոր թելից պատրաստված 2-ական, իսկ  
տվյալ դեպքում՝ ծինու մասում, 3-ական  
օղակ, աղյուսանման դասավորմամբ։ Այս  
օղակների անցքերի միջից անցնում են ար-  
ծաթի կլոր կտրվածքով թելեր, որոնք շղթա-  
յանման այս գործվածքին տալիս են լայն և  
տարածուն տեսք։ Երկշարք դրվագով և  
նրանց հզերող երեք շարք շղթայակերտ գործ-  
վածքը ստեղծում են շարժական մի ամբող-  
ջություն, որը հեշտացնում է ձեռագրի բաց-  
վելը ընթերցանության ժամանակ, ժամկետով  
կռնակը։ Սրանով է բացատրվում նախորդ  
կռնակի մաշվելը և նորի կերտումը։

Դռնակը (Նկար 6) թեև ուկուց է և փոփոխ-  
ման չի ենթարկվել ինչպես կազմի կռնակը,  
սակայն այնքան վնասված է օգտագործելե-  
լուց, քանի որ ամենագործածական և ամե-  
նաշարժուն մասերից մեկն է կռնակից հետո,  
որ հետագա նորոգության ժամանակ այն ամ-  
րացրել են 0,4 մմ. Հաստությամբ մի արծաթ  
թերթի վրա, որն իր հերթին ամրացվել է կաշ-



Նկար 6.—Ավետարանի կազմի դռնակը

վի վրա: Այս բոլորը ամրացված են տեղում  
19 գամելով:

Այս դռնակի մակերեսի մոտավորապես 25  
տոկոսը պակասում է ձախից, այսինքն այն  
կողմից, որտեղից նա կապվում է երկրորդ  
կողի հետ: Նրանց միացումը կազմող շղթա-  
յանման կերտվածքից այժմ շատ քիչ օղակ-  
ներ են մնում, օգտագործվելուց թափած լի-  
նելով: Վերոհիշյալ պակաս մասի շրջագիծը  
ծուռումուռ է և 19 գամելի մեծ մասը ամ-  
րացնում են թափելուց պակասած սուլյն կող-  
մի վրա: Դրվագված է 2 կողերի ոճով՝ կենտ-  
րոնի ողղահայաց շարթի վրա ունենալով  
4 իրարահաջորդ խաչեր, որոնց վրա խոր  
գծային փորագրությամբ. կա հետևյալ արձա-  
նագրությունը (նկար 7). «Խշայ Աւտ. Խշայ

ԽթԱՅ ԱԽ ԽԹԱՅԱՒԽ ԽՇԱՑՄՓԱՐ ՅԱՂՄՆ


Նկար 7.—Ավետարանի դռնակի արձանագրությունը

Աւս, Խշայ Սֆար, Յաղսն» (Խ[ո]ջայ  
Ա[մ]ել) տ. Խ[ո]ջայ Աւս (Կամ Աւետիս).  
Խ[ո]ջայ Ս[ա]ֆար. յաղօթսն): Այս խաչերը  
հայկական խաչի դասական ձևը շունեն:  
Դռնակի վերջացած մասում, այսինքն այն  
կողմը, որ վնասված չէ, դրվագված են հինգ  
աղավնիներ, որոնց ձևը հիշեցնում է մեռո-  
նաթափ աղավնուն: Վստահաբար կարող ենք  
ասել, որ մյուս, ներսի պակասած կողմում

էլ քանդակված են եղել նույն թվով աղավ-  
նիներ, քանի որ այժմ էլ նրանցից մեկի մար-  
մինը հստակորեն երևում է վերևից երկրորդ  
աղավնու դիմացը: Կան 9 ակներ նախորդ-  
ների որակից: Դատելով գոյություն ունեցող  
ակների դասավորումից, կարող ենք ասել, որ  
մյուս կողմն էլ եղել են 3 ուրիշ ակներ,  
բարձրացնելով այս դռնակի վրայի ակների  
թիվը 12-ի: Գոյություն ունեցող 9 ակներից  
1-ը կանաչ է, 2-ը կապույտ, 5-ը կարմիր և  
1-ը մանուշակագույն:

Այս կազմի ամենաարժեքավոր և հիշար-  
ժան մասերն են երկու կողերի կենտրոնի  
Աստվածածնի և մանուկ Հիսուսի պատկերա-  
քանդակները, որոնց դեմքերի թախծոտ ար-  
տահայտությունը գրավում է զիտողին: Ուշա-  
դրության արժանի են նույնպես կռնակի և  
դռնակի վրայի աղավնիները, իրենց գեղեց-  
կությամբ:

Կարծում ենք, որ այս ոսկյա ձևագրա-  
կազմի գրվագրումը կատարված է Վանում,  
քանի որ առաջին կողի պատկերաքանդակի  
երկու կողմերի և նրանց ներքեւի զարդ-կեր-  
պարների գրվագրման ոճը նման է Մատենա-  
դարանի № 6776 ձեռագրի (նկար 8) արծա-  
թապատ կազմի վրայի պատկերաքանդակ-  
ների ոճին, որոնք նույնպես ունեն զարդ-  
կերպարի բնույթ: Մատենադարանի № 6776  
ձեռագրի արծաթ կազմի կռնակի ներքեւի մա-



Նկար 8.—Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի № 6776 ձեռագրի արծաթապատ կազմը

սում կա փորագրված արձանագրություն, ըստ  
որում այդ ձեռագիրը արծաթապատվել է 1651  
թվականին, Արծկե գյուղաքաղաքում (ի գիւ-  
ղըն Գաշողայ):

Նկատի ունենալով, որ էջմիածնա այս ձե-  
ռագրակազմը ավելի հին է (այդ մասին վկա-  
յում է նրա ներկա վիճակը), քան Մատենա-  
դարանի № 6776 ձեռագրի կազմը, կարող ենք  
ասել, որ այս կազմը ժամանակից ուշ չէ և հա-  
վանաբար Մատենադարանի № 6776 ձեռա-  
գրակազմը Զիրաքի (?) ստեղծած «Պապոցի»  
շարունակությունը կազմող մի վարպետի աշ-  
խատանք է: Եթե նկատի ունենանք, որ սույն  
ձեռագիրը գրված է 1484 թվականին, և որով-  
հետեւ երեսի կաշին էլ (որի հնանալու պատ-

ճառով, հաճախ, երեսապատում են մետա-  
ղով) ընդհանրապես 50-ից 100 տարի կարող  
է գործածության դիմանալ, կարող ենք են-  
թագրել, որ կազմը կատարված է առավելա-  
գույնը ժամանակից գերշերին:

Առաջին և երկրորդ կողերի արձանագրու-  
թյունների մեջ գտնվող անունները շատ հա-  
վանաբար գլխավոր նվիրատունների անուն-  
ներն են, իսկ գոնակի անուններն էլ երկրոր-  
դական նվիրատուններինը: Այս նվիրատվու-  
թյան հավաքականությունը բացատրվում է  
նյութի թանկարժեքությամբ, քանի որ մի  
մարդու համար զգվար կլիներ այս մեծ ծախ-  
սը հոգալ:

